



Ազատագրական պայքարը որպես ահաբեկչություն ներկայացնելու, ավելի քան, 117-ամյա խեղկատակությունը

Ցեղասպանության ենթարկված եւ իրավազրկված ժողովրդի /եւ ժողովուրդների/ ազատագրական պայքարը, որպես ահաբեկչություն ներկայացնելու այս ավելի քան 117-ամյա խեղկատակությունը չի ավարտվի, քանի դեռ նույն այդ ժողովուրդը շատ ավելի վճռական կերպով չձեռնարկի իր իրավունքների պաշտպանության գործը, այդ թվում՝ ազատագրական պայքար մղելու եւ ինքնապաշտպանության դիմելու, ինչպես նաեւ բռնության ու ճնշման դեմ ըմբոստանալու իր իրավունքը:

1. 117-ամյա խեղկատակությունը եւ հանցագործությունը կրկնելու փորձը:

Ահավասիկ հերթական խեղկատակությունը, այս դեպքում քուրդ ժողովրդի իրավունքների հետ է կապված: Թուրքիայի Ազգային ժողովի քուրդ պատգամավորներին հետապնդելու հետ մեկտեղ նոր հալածանքներ են սկսվել Դիարբեքի քուրդ քաղաքապետ Օսման Բայդեմիրի նկատմամբ, «Ինչպես տեղեկացնում են թուրքական լրատվամիջոցները, թուրքական արդարադատությունը «ահաբեկչական կազմակերպության քարոզչությամբ զբաղվելու» եւ «ահաբեկչական կազմակերպության անունից հանցանք գործելու» համար պահանջում է 28 տարվա ազատազրկման դատապարտել Օսման Բայդեմիրին: Բայդեմիրի հանցանքը կայանում է նրանում, որ քաղաքապետը մասնակցել է թուրք զինվորների հետ բախման ժամանակ սպանված Քրդստանի բանվորական կուսակցության (PKK) զինյալների թաղման արարողությանը, ինչպես նաեւ՝ «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» քրդամետ կուսակցության կողմից կազմակերպված երթին, որի ժամանակ քայլել է PKK-ի առաջնորդ Աբդուլլահ Օջալանի լուսանկարի առջեւից»: /Tert.am, 08.11.11/

Օր չի անցնում, որ Թուրքիայում հալածանքների չենթարկվեն ազատ մտածողության տեր մտավորականներ: Շինճու եւ անհեթեթ մեղադրանքներով ձերբակալվել է թուրք հայտնի մտավորական, գրող հրատարակիչ Ռազրփ Չարաքոլուն: «Հայոց ցեղասպանությունը ճանաչած թուրք մտավորականին մեղադրում են Աբդուլլահ Օջալանի դեկավարած Քրդական աշխատավորական կուսակցության հետ առնչությունների մեջ»: /Azatutyun.am, 31.10.2011/

Առայժմ այս անօրինական եւ ապօրինի գործողություններին արձագանքել են Նիդերլանդների խորհրդարանի պատգամավորները, որոնք՝ «2011 թ. նոյեմբերի 1-ին գրավոր հարցեր են ներկայացրել Նիդերլանդների արտգործնախարար պարոն Ռոզենթալին՝ վերջերս մի քանի տասնյակ թուրք լրագրողների, գրողների եւ հրատարակիչների, այդ թվում՝ թուրք գրող եւ հրատարակիչ Ռազրփ Չարաքոլուի ձերբակալության մասին: Խորհրդարանականները ցանկանում են Նախարարից իմանալ, թե նա ինչպես է գնահատում այդ ձերբակալությունները, ինչպես է ընթանալու ազատագրկման գործընթացը եւ որոնք են Չարաքոլուի եւ մյուս ձերբակալվածների դեմ հարուցված մեղադրանքները: Նրանք նաեւ հարց են բարձրացնում թե արդյո՞ք Չարաքոլուի ձերբակալությունը կապ ունի հայոց ցեղասպանության մասին նրա հրապարակումների հետ: Հովանդացի պատգամավորները ցանկանում են նախարարից նույնպես իմանալ, թե արդյո՞ք Թուրքիայում մամուլի եւ խոսքի ազատության մթնոլորտը գնալով վատանում է Պատգամավորները հարցնում են, թե այս ձերբակալություններն ինչպիսի ազդեցություն կարող են ունեննալ, ըստ նախարարի, Թուրքիայի հետ Եվրոմիության անդամակցության բանակցությունների վրա»: /Norkhosq.net, November 4th, 2011/

Սակայն այս խեղկատակությունը ավելի հեռուն գնալու միտում ունի, որն է ներքին եւ արտաքին մակարդակներում Թուրքիայի քաղաքական վերնախավի եւ իշխանության ստանձնած պարտավորությունները տարածաշրջանային նոր հանցագործություններ իրականացնելու ծրագրերով: Նկատի առնելով այս կարեւոր հանգամանքը, դժվար թե Նիդերլանդների խորհրդարանի պատգամավորների բողոքները կարողանան կասեցնել այս սպառնալի գործընթացները: Դրա համար այլ արմատական միջոցներ են պետք:

2. 117-ամյա խեղկատակությունն ու հանցագործությունը չեզոքացնելու եւ դրան վերջ դնելու ուղիները:

Ասում են, երբեմն պատմությունը կրկնվելու միտումներ ունի: Այդպես կարող է լինել եւ այս պարագային, եթե վճռական միջոցներ ձեռք չառնվի: Մասնավորապես, եթե հաշվի չառնվի, որ 1894-ից սկսած թուրքական իրար հաջորդող կառավարությունները եւ իշխող քաղաքական վերնախավը, մասնավորապես՝ Աբդուլ Համիդ 2-ը, երիտթուրք պարագլուխներ՝ Թալեաթ-Էնվեր-Ջեմալը, հանրապետականի համարում ունեցող Մուստաֆա Քեմալը եւ նրանց գործի շարունակողները մշտապես որդեգրել եւ իրենց հաջորդին փոխանցել են Օսմանյան Թուրքիայի եւ Արեւմտյան Հայաստանի ու Կիլիկիայի տարածքում ապրող ոչ թուրք ժողովուրդների՝ հայերի, հույների, արաբների, ասորիների... իսկ 1920-ական թթ. սկսած քրդերի, 1974-ին՝ կիպրացի հույների, 1990-ական թթ.՝ սերբերի, այլ կերպ ասած՝ «բոլոր հին ժողովուրդների», ինչպես կձեւակերպեր արաբական աշխարհում Բրիտանական Կայսրության գլխավոր հետախույզ Լոուրենս Արաբացին, բնաջնջման, բռնագաղթի եւ բռնի ձուլման քաղաքականությունը: /Armar.am, 09.11.2011/

Այդ ժողովրդասպան քաղաքականությանը դիմակայելու իրավական առանձին փորձեր արվում են: Օրինակ, կիպրացի հույները եվրոպական դատական աստիաններ են ներկայացրել 15 հազարից ավելի դիմումներ՝ թուրքական բանակի հանցագործությունների վերաբերյալ Հյուսիսային Կիպրոսում: Վերջերս տեղականում ենք նաեւ, որ Գերմանիայում ապրող քրդերն են դատական վարույթ սկսել Թուրքիայի ներկայի վարչապետի դեմ: Այսպես՝ «Համբուրգ քաղաքի փաստաբաններ Բրիտտա Էդերը եւ Հայնց Շնեյդերը դիմում են հղել Գերմանիայի Գլխավոր դատախազությանը, մեղադրելով Թուրքիայի վարչապետ Էրդողանին, պաշտպանության նախարար Վեջիդի Գյունեշին եւ մի շարք այլ պաշտոնատար անձանց ռազմական հանցագործությունների մեջ: Փաստաբանները, որոնք ներկայացնում են զոհված քուրդ զինյալների հարազատների շահերը, պնդում են, որ 1933թ-ից այս կողմ առնվազն տասը դրվագում թուրքական ուժային կառույցներն առանց դատ ու դատաստանի հաշվեհարդար են տեսել քուրդ ապստամբների հետ, կիրառել են մարդու արժանապատվությունը ոտնահարող մեթոդներ եւ տանջանքներ, ինչպես նաեւ՝ քիմիական զենք»: /Armweeklynews.am, 03.11.11/

Սակայն պետք է ընդունել, որ այդ առանձին գործընթացներին զուգահեռ ուժերը մեկտեղելու եւ միավորելու լուրջ խնդիրներ է առաջանում, ի տես թուրքական քաղաքական վերնախավի եւ պետության ռազմա-քաղաքական նոր ակտիվության, որն այլ բան չէ, քան թուրքական պետական ահաբեկչության՝ ֆաշիզմի, ռասիզմի, պանթուրքիզմի նորօրյա դրսևորումներ տարածաշրջանում ապրող ժողովուրդների ու պետությունների նկատմամբ: Թուրքական բանակի ներխուժումներն Իրաք եւ Թուրքիա - Սիրիա սահմանային զարգացումները մեծ հանցագործությունների առաջին դրսևորումներն են միայն:

Այս իմաստով կարելու է ասորիների առաջարկը: Ասորական ֆորումի ղեկավար, ասորիների փրկության ֆոնդի ղեկավար Էլիաս Յալդան ասել է. «Մենք ցանկանում են հայերի հետ միասին Ցեղասպանության ճանաչման համար պայքար մղել»: /Panorama.am, 05/11/2011/

Մյուս կողմից, Եվրոպայում հանկարծ հիշել են, որ՝ «Էրդողանը Թուրքիան վերածում է զիշատիչ պետության, որը, ըստ ամենայնի, մտադիր է գրավել Միջերկրական ծովի բոլոր նավթային եւ գազային պաշարները, որոնք նրան չեն պատկանում: Թուրքիան սպառնում է Կիպրոսին: Հզոր զինված խմբավորում է տեղակայված կղզում եւ դրա անմիջական մոտակայքում: Իրադրությունը ծայրաստիճան վտանգավոր է: Հարձակումների, վիրավորանքների եւ սադրանքների՝ թուրքական անպատասխանատու քաղաքականությունը պետք է անմիջապես դատապարտվի: Այն պարզորոշ սպառնալիք է Միջերկրական ծովի խաղաղությանը եւ անվտանգությանը,- հայտարարել ԵԱՀԿ-ում Նիդերլանդների ներկայացուցիչ Վիմ Կորտոնեովենը՝ պահանջելով, որ հարցը դրվի ԵԱՀԿ ձևեռային նստաշրջանի քննարկմանը: /Yerkir.am, 11.10.2011/

Ըստ էության ԵԱՀԿ ներկայացուցիչը անուղղակիորեն ընդունում է, որ Եվրոպան գործ ունի պետական ահաբեկչության հետ: Մնացել է, որ ընդունի նաեւ, թե տարածաշրջանի ժողովուրդները այդ ահաբեկչական պետության կամ այդ պետական ահաբեկչության ուղղակի զոհերն են արդեն 117 տարի ի վեր: Ինչը չեն արել Եվրոպաառլամենտի պատգամավորները 1987-ին, երբ հաստատում էին «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձեւը, որտեղ չգիտես ինչու շրջանցելով ներպետական եւ միջազգային բոլոր սկզբունքներն ու նորմերը՝ նշում էին, թե ժամանակակից Թուրքիան պատասխանատու չէ Օսմանյան Թուրքիայի իրականացրած հանցագործությունների համար:

Այնուհանդերձ, գոնե մեկ քայլ ճիշտ ուղղությամբ կատարված է արդեն. «Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հոկտեմբերի 25-ին միաձայն որոշել է, որ Հայոց ցեղասպանության ճանաչումը չի կարող քրեականացվել Թուրքիայում»: /NEWS.am, 2011 | 12:14/

Հ.Գ. - 117-ամյա այս խելկատակությանն ու հանցագործությանը վերջ դնելու ուղիներից մեկը թուրքական պետական ահաբեկչությանը դիմակայելու պատրաստ լինելն է, մշտապես ինքնապաշտպանության պատրաստ լինելը: Կարելի է, որ 117-ամյա թուրքական պետական ահաբեկչության զոհ ազգերը նույնպես դիմակայության պատրաստ լինեն եւ շատ դեպքերում միասնաբար հանդես գան:

Այլապես, հանցագործությունը կրկնվելու միտում ունի՝ հայկական, հունական, քրդական... ազատագրական պայքարի դրվագները, իբրեւ ահաբեկչություն ներկայացնելու եւ այդ ժողովուրդների ազատատենչ ձգտումները բռնամիջոցներով ու կեղծիքներով կասեցնելու նպատակով: Զուր հույսեր, անշուշտ, բայց տարածաշրջանի ժողովուրդների ավտանգությունը, խաղաղությունն ու կայուն զարգացումը ապահովելու համար անհրաժեշտ նախապայման է թուրքական պետական ահաբեկչության 117-ամյա հանցագործությունների համապարփակ եւ ամբողջական դատապարտումը:

Հենց դատապարտումը եւ ոչ թե ճանաչումը, ինչով երկար տարիներ զբաղեցրին, նախ եւ առաջ, այդ ահաբեկչության հիմնական թիրախը դարձած մի հին ժողովրդի՝ հայությանը:

**Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդի
Մամլո Նաղորդագրություն
12.11.2011 թ.**

Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդ
stat.gov.wa@haybachdban.org